

GUIDELINES FOR MEDIA

ԳԵՆԴԵՐԻ, ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԳՏՔԻ ՀԱՐՑԵՐԻ
ԶԳԱՅՈՒՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ
ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՈՂԵՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ
ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ



This publication was produced within the programme “Ending Violence against Women and Girls in Georgia (EVAWGG)” implemented by UN Women and UNFPA with the financial support of the European Union.

This publication was developed by Eva Barboni in cooperation with the Charter of Journalistic Ethics of Georgia.

Its contents are the sole responsibility of the authors and do not necessarily reflect the views of the European Union, UN Women or UNFPA.

© 2022 UN Women. All rights reserved.

GUIDELINES FOR MEDIA

ԳԵՆԴԵՐԻ, ԳԵՆԴԵՐԱՅԻՆ

ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԳԲՏՔԻ ՀԱՐՑԵՐԻ

ԶԳԱՅՈՒՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ

ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ

ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ



ევროკავშირი
საქართველოსთვის
Project funded by the European Union



THE GEORGIAN CHARTER
OF JOURNALISTIC ETHICS



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լրատվամիջոցները զգալի ազդեցություն ունեն գեղեցիկի և սեռական կողմնորոշման հետ կապված սոցիալական և մշակութային նորմերի ձևավորման և զարգացման վրա: Կանանց և ԼԳԲՏՔԻ անձանց նկատմամբ ԶԼՄ-ների վերաբերմունքը և նրանց վերաբերող կարծրատիպերի ամրապնդումը կապված են առօրյա կյանքում այս խմբերի նկատմամբ բռնության հետ:

Լրատվամիջոցները պարզապես աշխարհի հայելին չեն. նրանք ընկալումների և գաղափարների ակտիվ ձևավորողներ են: Սա նշանակում է, որ նրանք մեծ պատասխանատվություն են կրում, երբ խոսքը վերաբերում է կանանց, գեղեցիկի և սեռական կողմնորոշման արդար, ճշգրիտ, ոչ կարծրատիպային և հավասարակշռված պատկերմանը, սեռին և սեռական կողմնորոշմանը:

Աշխարհի շատ երկրների լրատվամիջոցներում կանայք թերներկայացված են, նրանք փոքրամասնություն են կազմում քաղաքականության մեջ, իսկ կանանց մասին նորությունները հաճախ տղամարդու ձայնով են հաղորդվում: Շատ ավելի հավանական է, որ տղամարդիկ պատկերվեն նրանց կարծիքները, փորձառությունները և մասնագիտությունները արժևորող ձևով: Թեև փորձագետները նշում են, որ լրագրողական դպրոցներում ընդգրկված և բոլոր տեսակի լրատվամիջոցներում աշխատող կանանց տեսակարար կշիռը Վրաստանում համեմատաբար բարձր է, նրանք դեռևս քիչ են ներկայացված ղեկավար պաշտոններում:¹

Այսպիսով՝ սույն ուղեցույցը նպատակ ունի նվազեցնել կարծրատիպերը և կանանց ու ԼԳԲՏՔԻ համայնքի ներկայացուցիչների թերներկայացվածությունը, ինչպես նաև նվազեցնել այնպիսի լուսաբանումները, որոնք կարող են օրինականացնել նախապաշարմունքները և բռնությունը նրանց դեմ: Ընտանոցությունները ցույց են տալիս, որ երիտասարդ տարիքից

երեխաները կրում են այն կարծրատիպերի ազդեցությունը, որոնք լրատվամիջոցներն են նրանց հրամցում:²

Կանայք հաճախ պատկերվում են որպես խնամող, մողել, ցանկասիրության օբյեկտ կամ զոհ: Նաև ավելի մեծ է կանանց ֆիզիկական հատկանիշները կամ մակերեսային բնութագրերը ներկայացելու հավանականությունը, ինչպիսին են արտաքին տեսքը, հագուստը, տարիքը և անձնական կարգավիճակը, իսկ տղամարդկանց մասին ավելի հաճախ խոսում են՝ անդրադառնալով նրանց գաղափարներին, փորձառություններին և մասնագիտություններին: Կանանց նկատմամբ բռնությունը հաճախ ներկայացվում է տեղական համայնքի տեսանկյունից, ներառյալ բռնարարի հարևանների, ընկերների կամ ընտանիքի անդամների: Այսպիսի բովանդակությունը (հարցազրույցներ, հայտարարություններ, և այլն) հաճախ ներառում է կարծրատիպային, նախապաշարմունքներով լի և կողմնակալ ձևակերպումներ, որոնք հաճախ կնատյաց կամ հոմոֆոբիկ բնույթ են կրում:

Նմանապես, հակա-ԼԳԲՏՔԻ բռնությունը և ագրեսիան հաճախ թերագնահատվում կամ որպես սենսացիա են ներկայացվում լրատվամիջոցների կողմից, իսկ ԼԳԲՏՔԻ համայնքի ներկայացուցիչներին հաճախ վերագրվում են սահմանափակ որակներ, որոնք նրանց կյանքի իրականությունը չեն արտացոլում: Նրանց հետ հաճախ չեն խորհրդակցում իրենց առնչվող հարցերի շուրջ:

Կանանց նկատմամբ բռնությունը երբեմն նույնիսկ իդեալականացվում և դրամայնացվում է: Պատկերների հիպերսեքսուալիզացիան և սոցիալական ցանցերի օգտագործումը կանանց որպես առարկա ներկայացնելու համար նոր համատեքստ են ձևավորում, որտեղ կանայք և հատկապես երիտասարդ կանայք ձևավորում և արտահայտում են իրենց ինքնությունը: Կանանց

1 <https://georgia.unwomen.org/en/digital-library/publications/2020/05/the-country-gender-equality-profile>

2 <https://www.nordicom.gu.se/en/publikationer/beyond-stereotypes>

սեքսուալացված կերպարները վատ օրինակ են ծառայում աղջիկների և երիտասարդ կանանց համար և հասարակության մեջ կանանց դերի մասին կեղծ պատկերացում են ձևավորում :

Նմանապես, ԶԼՄ-ներում ԼԳԲՏՔԻ անձանց խեղաթյուրված և ոչ ճշգրիտ ներկայացումը նպաստում է ԼԳԲՏՔԻ երիտասարդների համար ոչ անվտանգ միջավայրի ստեղծմանը, ինչը խոչընդոտում է հասարակության կողմից նրանց ընդունմանը:

Վրաստանյան լրատվամիջոցները գենդերի և սեռական կողմնորոշման ավելի հավասարակշռված, ընդգրկուն և բազմազան պատկերներ ցուցադրելու հսկայական ներուժ ունեն: Կանանց նկատմամբ բռնությունը պատասխանատու կերպով զեկուցելը կխրախուսի կանանց և աղջիկների նկատմամբ բռնության հանդեպ ավելի մեծ անհանդուրժողականությունը, իսկ ԼԳԲՏՔԻ խնդիրների վերաբերյալ ավելի տեղեկացված հաղորդումը կխրախուսի ըմբռնումը և այդպիսով կնպաստի նախապաշարմունքների, ատելության խոսքի և բռնության նվազեցմանը: Նմանապես, խթանելով արդար, գենդեր-զգայուն լրատվությունը, լրատվամիջոցները կարող են օգնել դիմակայել կանանց նկատմամբ բռնությանը քաղաքականության մեջ, որը հանդիսանում է կանանց առաջնորդության և հասարակական կյանքին լիարժեք մասնակցության ամենալուրջ

խոչընդոտներից մեկը՝ դրանով իսկ օգնելով ստեղծել ավելի արդար և հավասար հասարակություն: .

րդար լուսաբանման նաև տնտեսական հիմնավորում կա. կանայք և աղջիկները ևս լրատվամիջոցների սպառողներ են: Նորվեգիայի և Միացյալ Թագավորության մեդիա ընկերությունները, ինչպես նաև համաշխարհային լրատվական գործակալությունները հայտնել են, որ իրենց ռեպորտաժները կանանց համար ավելի գրավիչ դարձնելը օգտակար է եղել բիզնեսի համար:

Ստորև ներկայացված ուղեցույցները կոչված են աջակցելու լրատվամիջոցներին՝ ապահովելու ավելի արդար և զգայուն լուսաբանում: Դրանք հիմնված են «Եվրախորհրդի գենդերային հավասարության ազգային համակարգողների ցանցի 1-ին համաժողովի զեկույցի»³ վրա՝ ի լրումն մեդիա զարգացման միջազգային կազմակերպությունների հետազոտությունների և առաջարկությունների:

Առաջարկությունների մեծ մասը վերաբերում է ինչպես գենդերի, այնպես էլ սեռական կողմնորոշմանն առնչվող լուսաբանումներին: Այնուամենայնիվ, առանձին-առանձին թվարկվել են նաև սեռական կողմնորոշման լուսաբանման հետ կապված լրացուցիչ առաջարկություններ:

3 <https://rm.coe.int/1680590587>

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԴԻԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

1. Ընդհանուր ուղեցույցներ

- a. Պայքարել կարծրատիպերի տարածման դեմ՝ զգույշ լուսաբանման և համապատասխան ծրագրերի միջոցով, ընդհանուր առմամբ, և լրատվամիջոցների ամենօրյա գործելակերպերում.
- Բոլոր լրագրողներին տրամադրել ուղեցույցներ, և, հնարավորության դեպքում, նաև ուսուցում գեների և սեռական կողմնորոշման արդար և զգայուն լուսաբանումների վերաբերյալ (օրինակ՝ կազմակերպել սեմինարներ՝ բնածին կողմնակալությունը հասկանալու և դրա դեմ պայքարի թեմայով):
 - Խրախուսել լրագրողներին վիճարկել, այլ ոչ թե ամրապնդել կարծրատիպերը (օրինակ՝ ստեղծելով ապահով տարածք, որտեղ գեներային կարծրատիպերը հարցականի տակ դնելը և հակառակ օրինակներ ներկայացնելը կընդունվի և կխրախուսվի):
 - Խմբագիրներին տրամադրել ուղեցույցներ պատմությունների ընտրության և լուսաբանման համար:
- ▶ Փորձել հավասարակշռել կանանց և տղամարդկանց ներկայությունը (օրինակ՝ կարծիք հարցնել հավասար թվով տղամարդկանցից և կանանցից):
 - ▶ Ապահովել այն հարցերի լուսաբանումը, որոնք առանձնահատուկ նշանակություն ունեն կանանց և ԼԳԲՏԻ անձանց համար:
 - ▶ Մտածել, թե արդյոք կան լրացուցիչ գեներային հարցեր, որոնք դուրս են մնացել հիմնական լուրերի շրջանակից:
- ▶ Նկատի ունենալ հետադարձելիությունը. հարցազրույցներ վարելիս մտածեք՝ ձեր տված հարցերը կարող են տրվել տղամարդու թեկնոջ: Ինչ-որ մեկին նկարագրելիս մտածեք, թե արդյոք դուք այս կերպ կբնութագրեիք այլ սեռի մարդու (օրինակ՝ չկենտրոնանալով կանանց ֆիզիկական արտաքինի կամ հագուստի վրա, նույնիսկ չեզոք ձևով):
 - ▶ Ընդունել, որ յուրաքանչյուր պատմություն չէ, որ ունի երկու կողմ (օրինակ՝ կանանց սպանության կամ ԼԳԲՏԻ անձանց դեմ բռնության մասին հաղորդումների դեպքում, նման հանցագործությունների համար արդարացում կամ պաշտպանություն չկա):
 - Տրամադրել ուղեցույցներ պատկերների և տեսանյութերի ընտրության վերաբերյալ՝ խուսափելով սենսացիաներից և սեքսուալացումից (օրինակ՝ օգտագործել պատկերներ, որոնք տղամարդկանց և կանանց ցույց են տալիս կյանքի բոլոր ոլորտներում՝ ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր):
 - Ուղեցույցներ տրամադրել անձնական կյանքի հրապարակման վերաբերյալ:
 - ▶ Միշտ ստացեք տեղեկացված համաձայնություն և պահպանեք տուժածների անանունության սկզբունքը:
 - ▶ Համոզվեք, որ հասկանում եք հարցազրույցի մասնակցի համատեքստը, որպեսզի ձեր գործողությունները ակամա վտանգի չենթարկեն նրան (օրինակ՝ չհրապարակելով տեղեկատվություն, որը կարող է օգտագործվել նրանց նույնականացման համար):

- Տրամադրել լրացուցիչ ուսուցում և ռեսուրսներ լրագրողներին, ովքեր կարող են հարցազրույց վերցնել բռնություն կամ տրավմա վերապրածներից:

- Ընդունել, որ կան բռնության բազմաթիվ տեսակներ, ներառյալ ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսական բռնությունը, ինչպես նաև սպառնալիքները, հարկադրանքը և առցանց ատելությունն ու չարաշահումը:

- ▷ Ընդունել, որ գենդերային բռնությունը վերաբերում է վնասակար գործողություններին, որոնք ուղղված են որևէ մեկի նկատմամբ՝ ելնելով նրանց գենդերից կամ ընկալվող գենդերից:

b. Լրագրողների և լրատվամիջոցների համար ստեղծել վարքագծի միասնական կանոններ, որոնք կարող են ամրապնդել լրագրողների միությունները՝ լրատվամիջոցների հետ համատեղ:

▶ **Ընդհանուր ուղեցույցներ.**

- ▷ Զատագովել նման ուղեցույցների համար և խրախուսել դրանց ընդունումը լրատվական կազմակերպությունների շրջանակներում:

- ▷ Իրականացնել ինքնակարգավորման մեխանիզմներ կամ նշանակել վերադաս անձի՝ բողոքներով զբաղվելու համար: Եթե դա հնարավոր չէ, լրատվամիջոցները պետք է նշանակեն մեկ կամ մի քանի

անձանց՝ կապ հաստատելու Վրաստանի Լրագրողական էթիկայի խարտիայի կամ ոլորտի մեկ այլ անկախ մարմնի հետ՝ բողոքները հասցեագրելու և վարքագծի և գործելակերպորի կանոնների. համապատասխան տարրերի մշակումը քննարկելու համար:

- ▷ Համագործակցել Խարտիայի հետ՝ ուսուցում և ուղեցույցներ ստանալու համար:

▶ **ԼԳՏՔԻ-ն առնչվող ուղեցույցներ :**

- ▷ Վերանայել վարքագծի կանոնները և այլ համապատասխան քաղաքականություններ՝ համոզվելու համար, որ դրանք ուղղված են կազմակերպության ներսում ոտնձգությունների դեմ պայքարի, ներառականության և խտրականության դեմ ուղղված խնդիրներին:

- ▷ Համոզվեք, որ խմբագրակազմը տեղյակ է ԼԳՏՔԻ անձանց և գենդերների ճանաչման հետ կապված համապատասխան տերմինաբանությանը և սահմանումներին:

- ▷ Համագործակցել ԼԳՏՔԻ համայնքի խմբերի հետ՝ լրագրողների համար ուսուցում տրամադրելու և լուսաբանման ուղեցույցներ ստեղծելու հարցում:

- ▷ Խրախուսել ավելի շատ երկխոսություն և փոխազդեցություն ԼԳՏՔԻ համայնքի անդամների և խմբերի հետ ամենօրյա լուսաբանումների ժամանակ.

2. Մեդիա բովանդակություն

a. Ապահովել, որ լրատվամիջոցների աշխատողների հավասարակշռված խումբ լուսաբանում է տարբեր թեմաներ, աշխատում է վկաների, փորձագետների և պանելիստների հետ՝ դրանով իսկ ապահովելով գենդերային ավելի լավ ներկայացվածություն և նպաստելով կանանց տեսակետների ավելի մեծ ըմբռնմանը:

▶ **Ընդհանուր ուղեցույցներ :**

- ▷ Ապահովել, որ նյութերի ընտրությունը արտացոլում է կանանց և ԼԳՏՔԻ անձանց բազմազան դերերը հասարակության մեջ և այն հարցերը, որոնք հետաքրքրում են կանանց և ԼԳՏՔ համայնքին:

- ▷ Ապահովել գենդերային հավասարակշռություն հարցվածների, փորձագետների և պանելիստների միջև:
- ▷ Հասցեագրել առանձին միջադեպերից անդին ավելի լայն համատեքստ, և ռեպորտաժներում ներառել գենդերային բռնության և ԼԳԲՏՔԻ անձանց դեմ բռնության վերաբերյալ վիճակագրական տվյալներ:
- ▷ Դրդապատճառներն անդրադառնալ պատասխանատու կերպով (օրինակ՝ խուսափել ռեպորտաժ կառուցելուց այն մասին, թե ինչպես է որոշակի ընտրությունը կամ տեղի ունեցած իրադարձությունը «հանգեցրել» բռնության) և առանց սենսացիոնիզմի (օրինակ՝ չներառել գրաֆիկական կամ անձնական մանրամասներ, եթե դա անհրաժեշտ չէ ռեպորտաժի համար):
- ▷ Ապահովել, որ ԶԼՄ-ներում ներկայացվող վիճակագրությունը ճշգրիտ և համատեքստային լինի (օրինակ՝ ընդունել, որ կանանց նկատմամբ բռնության շատ դեպքերի մասին չի հաղորդվում ոստիկանություն):
- ▷ Տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն կանանց նկատմամբ բռնության, գենդերային հիմքով բռնության և ԼԳԲՏՔԻ անձանց նկատմամբ բռնության սահմանման վերաբերյալ:
- ▶ **ԼԳԲՏՔԻ-ն առնչվող ուղեցույցներ**
- ▷ Համայնքի վրա ազդեցություն ունեցող խնդիրների լուսաբանման մեջ ներառել ԼԳԲՏՔԻ ջատագովների՝ որպես հարցվածներ, փորձագետներ և պանելիստներ:
- ▷ Ձգտել հավասարակշռություն ապահովել ԼԳԲՏՔԻ փորձագետների միջև, ումից հետ հարցազրույց է վերցվել այլ թեմաների լուսաբանման համար:
- ▷ Անհրաժեշտության դեպքում խորհրդակցեք ԼԳԲՏՔԻ խմբերի և կազմակերպությունների

հետ՝ համատեքստը հասկանալու և համոզվելու համար, որ ԼԳԲՏՔԻ խնդիրների մասին հաղորդվում է արդար և ճշգրիտ:

- b. Պրոակտիվ ձևով անդրադառնալ կարծրատիպերի հետևանքներին՝ կրթելով հասարակությանը և բարձրացնելով վերջինիս իրազեկությունը՝ լուսաբանելու այնպիսի հարցեր, ինչպիսիք են կանանց նկատմամբ գենդերային բռնությունը և ԼԳԲՏՔԻ անձանց նկատմամբ բռնությունը:

▶ **Ընդհանուր ուղեցույցներ**

- ▷ Ապահովել այս խնդիրները լայն լուսաբանումը՝ առանց համատեքստը հաշվի առնելու առանձին միջադեպերի վրա կենտրոնացման փոխարեն, ինչպես նաև ապահովել դրանց ընդգրկումը որպես մարդու իրավունքների խնդիրներ:
- ▷ Իրականացնել մեդիագրագիտության քարոզարշավներ՝ համագործակցելով այլ լրատվամիջոցների և մեդիա զարգացման միջազգային կազմակերպությունների հետ:
- ▷ Ը ն թ եր ց ո ղ ն եր ի ն տրամադրել գործնական տեղեկատվություն (օրինակ՝ ապաստարանների, իրավական օգնության և պաշտպանության ասոցիացիաների հասցեներ) և ռեսուրսներ (օրինակ՝ ինտերնետ հղումներ և գրքերի հղումներ), որտեղ նրանք կարող են օգնություն գտնել կամ հետազայում ուսումնասիրել գենդերային և ԼԳԲՏՔԻ բռնության թեմաները:

▶ **ԼԳԲՏՔԻ-ն առնչվող ուղեցույցներ :**

- ▷ Ապահովել համայնքի վրա ազդեցություն ունեցող խնդիրների հետևողական, ոչ սենսացիոն, կարծրատիպերից զերծ լուսաբանում:
- ▷ ԼԳԲՏՔԻ համայնքի նկատմամբ բռնության դեպքերը պատկերել որպես լուրջ հանցագործություն (ոչ որպես «պակաս կարևոր» կամ լուսաբանման պակաս արժանի):

- ▷ Բռնությունը չպատկերել որպես առանձին միջադեպ կամ միանվագ դրվագ:
- ▷ Գիտակցել, որ որ երբեմն բռնությունն ուղղված է ոչ միայն ԼԳՏՔԻ անձի, այլ նրա ընտանիքի և հարազատների նկատմամբ, ուստի հաղորդումը պետք է ընդգծի հանցագործության դրդապատճառը և չչեշտի զոհի փոքրամասնություն հանդիսանալու կարգավիճակը:
- ▷ Որպես սենսացիա չներկայացնել, որ բռնության զոհը ԼԳՏՔԻ անձ է:
- ▷ Խուսափել անհարկի ուշադրության սևեռումից այն բանի վրա, որ ինչ-որ մեկը գեյ է կամ տրանսգենդեր: Հաճախ դա կարող է այնքան էլ կապ չունենալ պատմության հետ, այլ պարզապես սենսացիոն տարր է ավելացնում:
- ▷ Խուսափել այն ամենից, ինչը հանգեցնում է հարկադրված բացահայտման (քամինգ-աութ) և խախտում է ԼԳՏՔԻ անձի գաղտնիության, անձնական տվյալների պաշտպանությունը: Սա կարող է ազդել «բացահայտված» անձի անվտանգության վրա:
- ▷ Խ ու ս ա փ ե լ կ ե ն տր ո ն ան ա լ վ իր ա հ ա տ ո թ յ ո ն ն եր ի և այլ միջամտությունների վրա, որոնց կարող է ենթարկված լինել տրանսգենդեր անձը: Այդ հարցերը տրվում են միայն անառողջ հետաքրքրությունից դրդված: Դրանք շեղում են լսարանին ամբողջական մարդուն տեսնելուց, ինչպես նաև մարդու վրա ազդող ավելի մեծ խնդիրներից, ինչպիսիք են խտրականությունը, աղքատությունը և բռնությունը:
- C. Օգտագործեք համապատասխան տերմինաբանություն՝ նկարագրելու և հաղորդելու օրենքի և մարդու իրավունքների խախտումները, ինչպիսիք են երեխաների նկատմամբ բռնությունը, բռնաբարությունը, սեռական ոտնձգությունը և բռնության այլ ձևերը:

▶ Ընդհանուր ուղեցույցներ

- ▷ Սահմանել ձևակերպումների կիրառման հստակ ուղեցույցներ.
 - Խուսափեք սենսացիոն վերնագրերից:
 - Որպես ընդհանուր լավագույն գործելակերպ, նկարագրեք բռնության և չարաշահման ենթարկված մարդկանց որպես «տուժածներ», այլ ոչ թե «զոհեր», եթե նրանք չեն սպանվել:
 - Բռնության ակտերը նկարագրելիս կատարողին դարձրեք նախադասության ենթակա և բայը վերագրեք նրանց (օրինակ՝ «նա բռնաբարել է նրան», այլ ոչ թե «նա բռնաբարվել է»):
 - Խուսափեք «ողբերգություն» և նմանատիպ բառերից, քանի որ դա ստիպում է կարծել, թե բռնությունն անխուսափելի կամ անվերահսկելի իրադարձություն է, այլ ոչ թե բռնարարի գիտակցված գործողությունը:
 - Զգույշ եղեք բռնություն իրականացնողներից հարցազրույց վերցնելիս և նրանց ենթադրյալ հանցագործությունների դրդապատճառը քննարկելիս, քանի որ դա կարող է ակամա ենթադրել արդարացում կամ ոգեշնչել ուրիշներին կատարել նմանատիպ գործողություններ:
 - Մի օգտագործեք ոճրագործին կարեկցող ձևով նկարագրող արտահայտություններ (օրինակ՝ վերնագրում հանցագործին մի անվանեք «չորս երեխաների հայր»): Խուսափեք կենտրոնանալ հանցագործի զղջման կամ ներողության վրա, և խուսափեք նրա վարքագիծը որպես «իրեն ոչ բնորոշ» կամ նմանատիպ բառերով նկարագրելուց: Նաև խուսափեք ենթադրելուց, որ տուժածի ինչ-որ մի արարք է դրդել միջադեպը:
 - Ընդունեք, որ ոչ բոլոր պատմություններն ունեն երկու կողմ (օրինակ՝ կանանց

սպանության կամ ԼԳՖՏՔԻ անձանց դեմ բռնության մասին հաղորդումների դեպքում, նման հանցագործությունների համար արդարացում կամ պաշտպանություն չկա):

- Տե՛ս ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կանանց և աղջիկների նկատմամբ բռնության մասին զեկույց. ձեռնարկ լրագրողների համար» ուղեցույցը:⁴

▶ **ԼԳՖՏՔԻ հարցերին առնչվող ուղեցույցներ.**

- ▷ Օգտագործեք կարծրատիպերից զերծ և հանդուրժողականությունը սատարող ձևակերպումներ և տերմինաբանություն: Տե՛ս GLAAD մեդիա տեղեկատու ուղեցույցը և NUJ ուղեցույցները ԼԳՖՏ լուսաբանման վերաբերյալ:
- ▷ Մի օգտագործեք և մի հաղորդեք միզոգինիկ (կնատյաց) կամ հոմոֆոբ ձևակերպումներ:
- ▷ Տրամադրեք հստակ ուղեցույցներ ձևակերպումների օգտագործման վերաբերյալ:
 - Լուսաբանումից առաջ մտածեք, թե արդյոք «զեյ», «լեսբի» կամ «բիսեքսուալ» պիտակները անհրաժեշտ և համապատասխան են պատմությանը: Եթե ոչ, մի օգտագործեք դրանք:
 - Խ ու ս ա փ ե ք ա յ ն պ ի ս ի արտահայտություններից, ինչպիսիք են «միասեռական հարաբերություններ» կամ «լեսբի զույգ»; փոխարենը պարզապես օգտագործեք «հարաբերություններ» կամ «զույգ»:
 - Իրազեկ եղեք ճիշտ/նախընտրելի տերմինաբանությանը (օրինակ՝ լեսբի, գեյ, բիսեքսուալ, քվիր, տրանսգենդեր և այլն) և

հասկացեք, որ որոշակի ձևակերպումներ վիրավորական են (օրինակ՝ «միասեռական» տերմինը կլինիկական նշանակություն ունի և հաճախ օգտագործվում է հակա-ԼԳՖՏՔԻ ծայրահեղականների կողմից, ուստի դրանցից պետք է խուսափել):

- Սեռական կողմնորոշումները, օրինակ՝ «զեյ» կամ «տրանսգենդեր», ածականներ են, ոչ թե գոյականներ:
- Խուսափեք այնպիսի ձևակերպումներից, որոնցով ենթադրվում է, որ ԼԳՖՏՔԻ լինելը ազատ ընտրություն է (օրինակ՝ «սեռական նախապատվություն» ասելու փոխարեն օգտագործեք «սեռական կողմնորոշում»):
- Խուսափեք բացահայտել ինչ-որ մեկի սեռական կողմնորոշումը առանց նրա համաձայնության:
- Միշտ օգտագործեք համապատասխան դերանուններ (այսինքն՝ մի սխալ սեռի ենթարկեք տրանսգենդերին):
- Մի օգտագործեք տրանսգենդեր անձի ծննդյան անունը, այլ օգտագործեք նրա կողմից ընտրած անունը:
- Երբեք մի պաշտպանեք փոխապերպման բուժումը կամ սխալ կերպով ակնարկեք, որ սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը հոգեկան հիվանդության ձև են:
- Սենսացիա մի դարձրեք այն փաստը, որ բռնությունից տուժածը ԼԳՖՏՔԻ անձ է:
- Աշխատեք ԼԳՖՏՔԻ խնդիրների և համայնքի առջև ծառայած ոտնձգությունների ու խտրականության վերաբերյալ իրազեկության և գրագիտության բարձրացման ուղղությամբ:

4 <https://en.unesco.org/news/reporting-violence-against-women-and-girls-unesco-launches-new-publication>

3. Քաղաքականություն և որոշումների կայացման մեխանիզմներ

a. Ամրապնդել ինքնակարգավորման մեխանիզմները և վարքագծի կանոնները՝ սեքսիստական կամ հոմոֆոբ պատկերացումները, ձևակերպումները և գործելակերպերը դատապարտելու և դրա դեմ պայքարելու համար՝ սահմանելով ոլորտի հստակ չափանիշներ և հետևանքներ և ապահովելով առաջընթացի մշտադիտարկում:

▶ **Ընդհանուր ուղեցույցներ.**

- ▶ Ապահովել, որ Խարտիայի դերը հստակ է ներկայացված և որ մարդիկ հասկանում են, թե ինչպես պետք է կապ հաստատել Խարտիայի հետ՝ բողոք ներկայացնելու համար:
- ▶ Ապահովել գենդերային հավասարակշռություն ինքնակարգավորման մեխանիզմի շրջանակներում:
- ▶ Ապահովել, որ բողոքները քննող անձինք մարդիկ լավ պատրաստված և փորձառու են գենդերագայուն հաղորդումների հարցում:
- ▶ Եթե արդեն պարտավորվել եք ստացված բողոքների վերաբերյալ տեղեկատվություն հաղորդել հաղորդակցության հանձնաժողովին, ևս մեկ քայլ արեք՝ հրապարակելով այս տեղեկությունը լրատվական կազմակերպության կայքում: Եթե դեռևս չեք պարտավորվել հաղորդել այս տեղեկատվությունը, դա արեք կամավոր ձևով: Տրամադրեք հնարավորինս շատ մանրամասներ՝ առանց բողոքներ ներկայացրած անձանց անանունությունը կամ անվտանգությունը վտանգելու:
- ▶ Հստակորեն գեկուցեք բողոքին ի պատասխան կատարված ցանկացած գործողության մասին (օրինակ՝ լրացուցիչ ուսուցում, կարգապահական պատասխանատվություն), ինչպես նաև բողոքների թիվը նվազեցնելու

նպատակով ձեռնարկված գործողությունների մասին:

▶ **ԼԳՏՔԻ-ն առնչվող ուղեցույցներ**

- ▶ Ապահովել, որ ինքնակարգավորվող մարմինն ունենա ԼԳՏՔԻ համայնքի վրա ազդող խնդիրների լուծման հստակ ուղեցույցներ:
- ▶ Խորհրդակցեք ԼԳՏՔԻ համայնքի խմբերի հետ ուղեցույցների վերաբերյալ՝ դրանց լավագույն հնարավոր արդյունավետությունը ապահովելու համար:

b. Ապահովել էթիկայի և վարքագծի ներքին կանոնների, ներառյալ բողոքարկման ընթացակարգերի լայն իմացությունը հանրության կողմից, ինչպես նաև դրանց հասանելիությունը:

▶ **Ընդհանուր ուղեցույցներ :**

- ▶ Հրապարակել էթիկայի և վարքագծի կանոնները լրատվական կազմակերպության կայքում:
- ▶ Ապահովել, որ քաղաքացիները և շահագրգիռ կողմերը կարողանան հեշտությամբ կապ հաստատել ինքնակարգավորման մեխանիզմի հետ (օրինակ՝ լրատվական կազմակերպության կայքէջում տեղադրելով բողոքի ձևը և ցուցադրելով ձևաթղթի հղումը):

b. Հրապարակավ ճանաչել և գնահատել կազմակերպություններին գերազանցության և առաջնորդության համար՝ հավասարակշռված ներկայացուցչությունը խթանելու գործում:

▶ **Ընդհանուր ուղեցույցներ.:**

- ▶ Լավագույն գործելակերպերի օրինակները հասանելի դարձնել այն լրագրողների համար, ովքեր ուղղորդման կարիք ունեն պատասխանատու լուսաբանման ուղղությամբ:

4. Զբաղվածություն և աշխատանքային պրակտիկա

a. Աջակցել կին մասնագետների վերադարձին աշխատանքի մայրության արձակուրդից հետո և խրախուսել այնպիսի աշխատանքային գործելակերպեր, որոնք համապատասխանում են մարդկանց բնական կյանքի շրջափուլերին, օրինակ՝ փոքր երեխաներին խնամելը:

▶ **Ընդհանուր ուղեցույցներ**

▷ Խրախուսել ծնողական արձակուրդի քաղաքականության վերանայումը և, ֆինանսապես հնարավոր լինելու դեպքում, ուսումնասիրել երեխայի ծննդյան վճարովի արձակուրդ տրամադրելու հնարավորությունները:

▶ **ԼԳԲՏԻ առնչվող ուղեցույցներ**

▷ Վերանայել երեխայի ծննդյան արձակուրդի քաղաքականությունը՝ համոզվելու համար, որ նրանք ակամա խտրականություն չեն դրսևորում ԼԳԲՏԻ աշխատակիցների նկատմամբ (օրինակ՝ հաշվի առնել որդեգրման արձակուրդ առաջարկելը և ուղեցույցներից հանեք գենդերային ձևակերպումները՝ հղում կատարելով «հիմնական խնամակալներին», այլ ոչ թե օրինակ «մայրերին»):

b. Ապահովել ուսուցում համապատասխան վարձատրությամբ և սոցիալական արտոնություններով և տրամադրել աջակցության այլ ձևեր մենթորական համակարգերի միջոցով: Երեխաների խնամքի աջակցությունը կարող է զգալիորեն թեթևացնել անհատների վրա դրված բեռը և օգնել նրանց հաղթահարել կառուցվածքային խոչընդոտները և առաջընթաց ունենալ իրենց կարիերայում:

▶ **Ընդհանուր ուղեցույցներ:**

▷ Դիտարկեք մենթորության ծրագրերի իրականացումը կամ համագործակցեք կազմակերպությունների հետ, որոնք տրամադրում են նման ծրագրեր:

c. Տրամադրել ռեսուրսներ և ծրագրեր կանանց մեղիա գրագիտության ամրապնդման համար՝

մեղիա տեխնոլոգիաներում տեղեկատվության և բովանդակության ձևավորման, հասանելիության և կառավարման գործում:

▶ **Ընդհանուր ուղեցույցներ:**

▷ Դիտարկեք ծրագրեր, որոնք հատուկ նպատաուղղված են կին ընթերցողներին/ դիտողներին ներգրավելուն, հատկապես գյուղական վայրերում, որտեղ հասանելիությունը կարող է ավելի սահմանափակ լինել:

d. Խրախուսել մեղիա կազմակերպությունների կառավարման և որոշումների կայացման ասպեկտների ուսումնասիրությունները՝ դառնալու բարձրագույն կրթության ուսումնական ծրագրերի և լրագրության վերապատրաստման ծրագրերի անբաժանելի մասը:

▶ **Ընդհանուր ուղեցույցներ.:**

▷ Խրախուսել լրագրողներին դասախոսություններ կարդալ և իրենց փորձը կիսել սկսնակ լրագրողների հետ:

▷ Տրամադրել փորձնական ծրագրեր և ապահովել գենդերային հավասարակշռություն փորձնականների միջև:

e. Պաշտպանել լրագրողներին աշխատանքի անկայունությունից և ստեղծել անվտանգ աշխատանքային միջավայր կանանց և ԼԳԲՏԻ անձանց համար:

▶ **Ընդհանուր ուղեցույցներ.**

▷ Կիրառել գենդերի և/կամ սեռական կողմնորոշման հիման վրա սեռական ոտնձգությունների և խտրականության բողոքների մեխանիզմ:

▷ Ապահովել, որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ (Հանրային պաշտպանի գրասենյակ) ոտնձգությունների մասին զեկուցելու մեխանիզմը հստակ և մատչելի լինի:

- ▷ Ապահովել վարքագծի կանոնների ներառումը բոլոր աշխատանքային պայմանագրերում:
- ▷ Ապահովել ոտնձգությունների և խտրականության դեմ պայքարի դասընթացների կանոնավոր իրականացումը:
- ▷ Ապահովել, որ խմբագրություններն ունենան թվային անվտանգության հստակ քաղաքականություն, և լրագրողների համար ուսուցում տրամադրեն իրենց անվտանգությունն ապահովելու վերաբերյալ:
- ▷ ԼԳՏՔԻ-ն առնչվող ուղեցույցներ
- ▷ Ապահովել, որ խմբագրություններն աշխատանքի ընդունեն ԼԳՏՔԻ համայնքի անդամների՝ որպես լրագրողներ, մեկնաբաններ և հարցազրույցներ, և որ նրանք ունեն մասնակցության լայն հնարավորություններ, ներառյալ իրենց համայնքին վերաբերող հարցերի լուսաբանումը ղեկավարելու հնարավորություն:

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Բիսեքսուալ

Տերմին (ածական), որն օգտագործվում է այն մարդուն նկարագրելու նկարագրելու համար, ով կարող է կայուն ֆիզիկական, ռոմանտիկ և/կամ հուզական ցանկություններ ձևավորել նույն սեռի կամ այլ սեռի ներկայացուցիչների նկատմամբ: Նաև անվանում են «բի»:

Փոխակերպման թերապիա

Որոշ հակա-LGBTB+ ակտիվիստներ պնդում են, որ սեռական կողմնորոշումը ընտրություն է և/կամ փոփոխվող վիճակ: Նրանք կարծում են, որ «միասեռականությունը» հոգեկան հիվանդության կամ հուզական խանգարման ձև է, որը կարող է «բուժվել» հոգեբանական կամ կրոնական միջամտությամբ: «Փոխակերպման թերապիա» ասելով հասկանում են այս «բուժումները» և/կամ ծրագրերը:

Գեյ

Այս տերմինը (ածական) գերադասելի է «համասեռամոլից» և օգտագործվում է նույն սեռի նկատմամբ ձգտում ունեցող տղամարդկանց և կանանց նկարագրելու համար: Կանանց մասին խոսելիս «լեսբուհին» առավել տարածված տերմինն է:

Գեներեր

Կանացիության և առնականության սոցիալապես ձևավորված բնութագրերը: Տարբերվում է «սեռից», որը վերաբերում է կենսաբանական հատկանիշներին: Գեներերային ինքնությունը վերաբերում է մարդու ներքին, խորը գեներերային զգացողությանը և միշտ չէ, որ համընկնում է ծննդյան պահին սահմանված սեռի հետ:

Գեներերային հիմքով բռնություն

Բռնություն կամ վնասակար գործողություններ, որոնք ուղղված են անձի նկատմամբ գեներերի կամ ընկալվող գեներերի պատճառով: Գեներերային հիմքով բռնության կարող են ենթարկվել կանայք և տղամարդիկ:

Հետերոսեքսուալ

Տերմին (ածական), որն օգտագործվում է այն մարդկանց նկարագրելու համար, ում կայուն

ֆիզիկական, ռոմանտիկ և/կամ զգացմունքային ձգտումն ուղղված է հակառակ սեռի անձանց: Նաև կոչվում է «սթրեյթ» (ուղիղ):

Հոմոֆոբիա

Վախ միևնույն սեռի անձանց նկատմամբ ձգտում ունեցող մարդկանցից, որը հաճախ արտահայտվում է անհանդուրժողականության, կողմնակալության կամ նախապաշարմունքների ձևով: Հոմոֆոբ ձևակերպումները կարող են նպատակաուղղված օգտագործվել որպես բանավոր վիրավորանքի ձև, կամ կարող են օգտագործվել անգիտակցաբար և առանց բացահայտ վիրավորելու մտադրության:

Ինտերսեքս

Ընդհանուր տերմին, որը նկարագրում է վերարտադրողական կամ սեռական անատոմիական և/կամ քրոմոսոմային օրինաչափությամբ ծնված մարդկանց, որոնք չեն կարող դասակարգվել որպես կոնկրետ արական կամ իգական սեռ:

Լեսբի

Տես Գեյ

ԼԳԲՏԲԻ

Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, քվիր և ինտերսեքս անձանց նկարագրելու համար օգտագործվող հապավում:

Միզոգինիա (կնատյացություն)

Կանանց նկատմամբ անբարյացակամ վերաբերմունք, արհամարհանք կամ արմատացած նախապաշարմունքներ:

Քվիր

Տերմին (ածական), որն օգտագործվում է որոշ մարդկանց կողմից՝ այն մարդկանց նկարագրելու համար, ում սեռական կողմնորոշումը բացառապես հետերոսեքսուալ չէ:

Տրանսգենդեր

Ընդհանուր տերմին (ածական) այն մարդկանց համար, ում գեներերային ինքնությունը տարբերվում է այն սեռից, որը նրանք վերագրվել է ծննդյան ժամանակ:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Շվեդիայի խորհուրդ. ԶԼՄ-ները և կանանց կերպարը. Շվեդիայի խորհրդի Գենդերային հավասարության ազգային համակարգողների ցանցի 1-ին համաժողովի զեկույց. Ամստերդամ, 2013. <https://rm.coe.int/1680590587>.

Free Press Unlimited. Գենդերազգայուն լուսաբանում <https://kq.freepressunlimited.org/themes/gender-equality/gender-in-media-content/gender-sensitive-reporting/>.

GLAAD. GLAAD մեդիա ուղեցույց, 10th ed. 2016. <https://www.glaad.org/sites/default/files/GLAAD-Media-Reference-Guide-Tenth-Edition.pdf>.

Lemish, Dafna, and Maya Götz, eds Կարծրատիպերից անդին? Տղաների և աղջիկների պատկերները և դրանց հետևանքները. Göteborg: Nordicom, 2017. <https://www.nordicom.gu.se/en/publikationer/beyond-stereotypes>.

Լրագրողների ազգային միություն. NUJ ուղեցույց ԼԳԲՏ լուսաբանման համար: London, 2014. <https://www.scribd.com/document/400343295/nuj-guidelines-on-lgbt-reporting-published-sept-2014-pdf>.

ՄԱԿ Կանայք. Վրաստանի գենդերային հավասարության պրոֆիլ, Թբիլիսի, Վրաստանի ՄԱԿ Կանայք գրասենյակ, 2020. <https://georgia.unwomen.org/en/digital-library/publications/2020/05/the-country-gender-equality-profile>.

ՅՈՒՆԵՍԿՕ. Կանանց և աղջիկների դեմ բռնության լուսաբանում . ձեռնարկ լրագրողների համար 2019. <https://en.unesco.org/news/reporting-violence-against-women-and-girls-unesco-launches-new-publication>.

Կանայք նորություններում. Կանանց ձայների ընդլայնում. Գենդերային հավասարակշռության ուղեցույց ԶԼՄ-ների համար, 2020. [https://www.womeninnews.org/ckfinder/userfiles/files/Gender Balance Guidebook_FINAL_RGB \(1\).pdf](https://www.womeninnews.org/ckfinder/userfiles/files/Gender%20Balance%20Guidebook_FINAL_RGB%20(1).pdf).



UN Women Georgia Country Office
Paliashvili st. 87, 0179,
Tbilisi Georgia
Tel: (+995 32) 222 06 04
(+995 32) 2 22 08 07

www.unwomen.org
georgia.unwomen.org